ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Բուլինգի դրսևորման պատճառները դպրոցում

Հետազոտող ուսուցիչներ՝ Անահիտ Սմբատյան

Գառնիի Ատոմի անվ. Հ 2 ավագ դպրոց

Լուսինե Սիմոնյան

ՀՊՄՀ-ի թիվ 57 հիմնական դպրոց

Անահիտ Ղազարյան

Հ. Պողոսյանի անվ. թիվ 82 հիմնական դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. ԲՈՒԼԻՆԳԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ.....6

1.1. Բուլինգի հասկացությունը հանրակրթական դպրոցում 6

1.2. Բուլինգի ընկալումը դպրոցականների շրջանում.....11

ԳԼՈՒԽ 2. ԲՈՒԼԻՆԳԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ.....13

2.1.Բուլինգի տեսակների և դրսևորումների տարածվածությունը դպրոցում.....13

2.2.Բուլինգի հետևանքները աշակերտների վրա 17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....21

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Դպրոցը կարևոր սոցիալականացման օղակ է, իսկ դասարանը առաջնային սոցիալական խումբ, որտեղ ինտենսիվորեն ձևավորվում են սեփական անձի, կյանքի նպատակների և աշխարհի մասին պատկերացումները: Այս առումով, հանրակրթության որակը ոչ միայն կրթության հասանելիությունը, բովանդակությունը և պատշաճ նյութատեխնիկական բազայի առկայությունն է, այլև անվտանգ հոգեբանական միջավայրը, որտեղ աշակերտը զերծ է ցանկացած բռնությունից և հնարավորություն ունի լիարժեք օգտագործել իր անձի զարգացման այդ կարևոր տարիները: Եվ եթե ֆիզիկական բռնությունը ավելի տեսանելի և դատապարտելի է, ապա սոցիալ-հոգեբանական բռնության բազմաթիվ դրսևորումներ (պիտակավորում, վիրավորանք, ծաղր, հայհոյախոսություն, կոպտախոսություն, բամբասանքներ, բացառում և ալն), որոնք միավորվել են bullying տերմինի ներքո, ավելի քիչ դատապարտելի են հասարակության կողմից, ավելի դժվար չափելի են, իսկ բացահայտման և կանխարգելման մեխանիզմները թե՛ օրենսդրական ակտերի բովանդակության, թե՛ դրանց կիրարկման մակարդակում ևս հստակ սահմանված չեն:

Բուլինգը բազմաշերտ և բազմամակարդակ երևույթ է, սակայն ՀՀ-ում իրականացված հետազոտությունները ավելի շատ ներկայացնում են բուլինգի տարբեր դրսևորումների տարածվածությունը, իսկ պատճառների, հետևանքների և լուծումների վերաբերյալ տեղեկատվություն գրեթե չկա: Ինչպես նաև, գրեթե ուսումնասիրված չէ այնպիսի կարևոր ասպեկտ, ինչպիսին ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններն են և բուլինգի կանխարգելման հնարավորությունները հայկական դպրոցական միջավայրում:

Խնդիրը կարևորել եմ և ուզում եմ բարձրաձայնել, քանի որ հատկապես դպրոցում հանդիպող բուլինգը համաշխարհային խնդիր է , որը կարող է ունենալ վատ հետևանքներ դպրոցական միջավայրի համար և կարող է խախտել այն օրենքը, որով յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ապահով կրթություն ստանալու: Բուլինգի երևույթը քննարկել են մի շարք հայտնի հոգեբաններ, հետազոտողներ,

կրթական հաստատություններ: Այս առումով հատկապես ակտիվ մասնակցություն են ունեցել Սկանդինավյան մի շարք երկրներ, Մեծ Բրիտանիան, Ճապոնիան, նաև ոչ այնքան զարգացած երկրներ: Այս հարցը արդիական է այնտեղ, որտեղ կա դպրոցական միջավայր: «Չորս աչքով ո՞նց լավ չես տեսնում»՝ տգեղ արտահայտություններից միայն մեկն է, որը մենք տեսնում ենք մեր դպրոցներում: Այս երևույթը մարդկային հասարակության մեջ կա վաղնջական ժամանակներից, ծաղրվել են թույլերը, տկարները, հետո՝ այլակրոնները և այդպես շարունակ: Շատ հոգեբաններ և մտածողներ նշում են, որ մարդու թույլ կողմը կամ այլակարծությունը ծաղրելը բնորոշ է չինքնահաստատված, թույլ մարդկանց, որոնց առաջ գնալու ռազմավարությունը ոչ թե այլոց գերազանցելն է, այլ նվաստացնելը, որով իրենք առանց աճելու դառնում են մնացածից ավելի «բարձր»: Սակայն ավելի կարևոր է հասկանալ, թե ինչպես պայքարել բուլինգի դեմ դպրոցում՝ երեխաների շրջանում: Բուլինգը Հայաստանում ընդհանրապես անտեսված խնդիր է հատկապես դպրոցներում: Չկա վիճակագրություն այն մասին, թե տարեկան քանի աշակերտ է բռնության ենթարկվում դպրոցներում հասակակիցների կողմից: Չկա վիճակագրություն, որովհետև բուլինգի չափման գործիքներ չկան: Հայաստանում չկա բուլինգը հասցեագրող ո'չ իրավական դաշտ, ո'չ ռազմավարություն, և ոչ էլ ճշգրիտ պատկերացումներ: Ավելին, իրավիճակն առավել խնդրահարույց են դարձնում հայկական մտածելակերպը, անհանդուրժողականությունը ամեն ինչի հանդեպ, ինչ դուրս է սահմանված «ավանդական կանոններից», իրազեկվածության, իրավագիտակցության ցածր մակարդակը, հասարակությունում փոխադարձ հարգանքի բացակայությունը և այլն:

Նշյալով էլ պայմանավորված է աշխատանքի արդիականությունը:

<u>Հետազոտության նպատակը</u> և <u>խնդիրները:</u> Հետազոտության հիմնական նպատակն է ներկայացնել և ուսումնասիրել հանրակրթական դպրոցներում բուլինգի դրսևորման պատճառները: Այդ նպատակների իրականացումը ենթադրում է կոնկրետ խնդիրների լուծում, որոնք էլ ապահովում են աշխատանքի տրամաբանությունն ու կառուցվածքը:

Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ *խնդիրները* ՝

- Վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականություն:
- Պարզաբանել բուլինգի հետևանքները դպրոցականների զարգացման գործում:
- Լուսաբանել բուլինգի դրսևորման պատճառները:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երկու գլուխներից, որոնք իրենց հերթին բաղկացած են ենթագլուծներից, եզրակացություններ բաժնից, օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. ԲՈՒԼԻՆԳԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

1.1. Բուլինգի հասկացությունը հանրակրթական դպրոցում

Բուլինգ կամ հալածանք, որևէ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեբանական ուժի գործադրումն է այլ անձի նկատմամբ, որը կրում է շարունակական բնույթ: «Բուլինգ» տերմինն առաջին անգամ գործածվել է 1530 թվականից՝ սկզբնապես նշանակելով «սիրելի», ապա տարբեր ձևափոխություններից հետո իր ներկայիս իմաստը ստացել է 1710 թվականից: Բուլինգի ենթարկվող անձը համարվում է բուլինգի զոհ, իսկ բուլինգի ենթարկող անձին համարում են բուլեր: Բուլինգը բաժանվում է մի քանի տարատեսակների. ա. կիբեր բուլինգ, որն իրականացվում է համակարգչի միջոցով՝ օգտագործելով համակարգիչը որպես վնասելու միջոց բ. ֆիզիկական բուլինգ՝ հարվածելու, ծեծի միջոցով գ. վերբալ կամ բառացի բուլինգ՝ պիտակավորման, ծաղրական անունների միջոցով դ.հարաբերական բուլինգ, որի միջոցով փորձում են մեկուսացնել մարդուն իր շրջապատից և կանխամտածված բացառում նրան հասարակությունից[1]:

Բուլինգը ըստ ձևերի կարելի է բաժանել 2 խմբի՝ ուղղակի և անուղղակի: Ուղղակի բուլինգի դեպքում դրսևորվում են հետևյալ վարքային ձևերը՝ հարվածել, ծեծել, գողանալ, ծաղրել, անընդհատ բարկացնել, վիրավորել, սպառնալ: Իսկ անուղղակի բուլինգի դեպքում բուլինգի զոհին կանխամտածված մեկուսացնում են իր միջավայրից, ընկերներից: Հետազոտողները փաստում են, որ ուղղակի բուլինգի ձևը հիմնականում բնորոշ է տղաներին, իսկ անուղղակի ձևը՝ աղջիկներին: Ուղղակի բուլինգը ավելի հաճախ հանդիպում է կրտսեր դպրոցի, ինչպես նաև միջին դպրոցի երեխաների մոտ, իսկ անուղղակի բուլինգը՝ արդեն միջին դպրոցում: Չնայած այս դասակարգմանը՝ և' ուղղակի, և' անուղղակի բուլինգը հանգեցնում են նույն արդյունքին՝ մարդու ֆիզիկական և հոգեբանական ճնշվածության: Երեխաների դեպքում հատկապես դեռահասության շրջանում (միջին դեռահասության տարիք) դպրոցական բուլինգը առավել վտանգավոր է, որովհետև այդ տարիքում մարդը

[1] Respecting others: Anti-bullying overview: Guidance Guidance document No: 050/2011 Date of issue: September 2011 https://gov.wales/sites/default/files/publications/2018-03/respecting-others-anti-bullyingoverview.pdf

փնտրում է իր կյանքի իմաստները, իր ճանապարհը, ինքն իրեն: Ու հանկարծ այդ ճանապարհին հանդիպում է բռնության, որը սովորաբար հենց այն առանձնահատկության հիմքով է լինում, որը կարող է դառնալ նրա վստահության, որպես անձ հաստատվելու կարևոր անկյունաքարը:

Բուլինգի հիմքը դնում են ծնողները, որքան էլ դա տարօրինակ հնչի: Բնական է, երբ ծնողն իր երեխային մեծարում է, նրան ասում, որ ամենալավն է, ունի շատ ավելի արժանիքներ, քան այլ երեխաները: Եվ այս թվացյալ սիրո դրսևորումը սերմանում է երեխայի մեջ մեծամտություն և փակում նրա աչքերը, որ չտեսնի իրականությունը և չցանկանա հավատալ, որ որևէ մեկն ինչ-որ բանում նրանից առաջ է անցել: Ցավոք, սա բարդ ուղղելի գործընթաց է, սակայն ավելի սարսափելի են այս «մոլախոտի» պատճառով կատարվող գործողությունները, հատկապես բուլինգը:Դիտարկենք սովորական դեպք, որտեղ գլխավոր հերոսը տղան է: Փոքր տարիքում ծնողական մեծարանքի արժանացած երեխան ծաղրում է աշխատասեր աշակերտներին, ովքեր ստանում են բարձր գնահատական: Պատանեկան տարիքում այդ նույն երեխան կնախանձի այլոց, ովքեր շատ ավելի հայտնի են աղջիկների շրջանում կամ ավելի խելացի են: Այս երկու դեպքում էլ նա ծաղրում է նրանց, փորձում զգալ իրեն ավելի բարձր: Ինչպես երևում է, ծնողների՝ իրենց երեխայով հպարտանալը կարող է բերել այդ երեխայի մեջ որակի զգացողության կորստի, երեխան կդադարի հասկանալ և համեմատել իր և մյուսների աշխատանքի որակը և միայն կհենվի իր ենթագիտակցության վրա, որում սերմանված է, որ նա ամենալավն է ամեն ինչում: Այս պայքարի ճանապարհը բավականին բարդ է և լի է խոչընդոտներով: Նախ ծնողն ունի ազատ խոսքի իրավունք, և ոչ ոք չի կարող արգելել նրան գովաբանել իր զավակին, և ապա ծնողը միշտ ցանկանում է ինքն իրեն համոզել, որ իր երեխան ամենալավն է, ինչը բնական է: Այս ամենի դեմ պայքարի միակ ձևը ծնողի հետ խորհրդակցելն է, խնդրելը, որ նա հնարավորինս քիչ անտեղի գովասանքի արժանացնի իր զավակին, գովելու հետ մեկտեղ ցույց տա, որ լավագույնը լինելու համար պետք է շատ աշխատել, այլապես իր երեխան կլինի ուրիշներից ավելի վատը:

Բուլինգը արգելվում է օրենքով: Մի շարք երկրներ, ինչպիսիք են Կոլումբիան, Միչիգանը, Մոնտանան, Հյուսիսային Դակոտան, Հարավային Դակոտան բուլինգը դատապարտում են օրենքով: ԱՄՆ քառասունհինգ նահանգները նույնպես ընդունել են հակաբուլինգային օրենքներ: Աշխարհում 13-ից 15 տարեկան աշակերտների կեսը՝ շուրջ 150 միլիոն երեխա, ասել է, որ դպրոցում կամ դպրոցի տարածքում հասակակիցների կողմից բռնության է ենթարկվել: Սա փաստում է ՅՈՒՆԻՍԵՖ-ի վերջին զեկույցներից մեկը: Բուլինգը վատ է անդրադառնում աշակերտների կրթության և բարեկեցության վրա թե' աղքատ և թե' հարուստ երկրներում հավասարաչափ[2]:

«Կրթությունը խաղաղ հասարակություն կառուցելու հիմքն է, մինչդեռ աշխարհում միլիոնավոր երեխաների համար դպրոցն ինքնին անվտանգ վայր չէ»,- ասում է ՅՈՒՆԻՍԵՖ-ի գործադիր տնօրեն Հենրիետա Ֆորը: «Երեխաներն ամեն օր բազմաթիվ վտանգների են ենթարկվում՝ ծեծկռտուքներ, ճնշումներ, բուլինգ կյանքում և առցանց, բռնի դաստիարակություն, սեռական ոտնձգություն, զինված կոնֆլիկտներ:Կարճաժամկետ տեսանկյունից սա ազդում է նրանց կրթության վրա, իսկ երկարաժամկետ տեսանկյունից՝ հանգեցնում դեպրեսիայի և նույնիսկ ինքնասպանության: Բռնությունն անմոռանալի դաս է, դաս, որ ոչ մի երեխա չպետք է սովորի»:

Աշխարհի տարբեր երկրներում ՅՈՒՆԻՍԵՖ-ը կազմակերպում է «Վերջ բռնությանը» թեմայով քննարկումներ երիտասարդների ու դեռահասների հետ:Այս միջոցառումների շարքը հարթակ է, որտեղ նրանք կարող են պատմել բռնության ենթարկվելու իրենց պատմությունները, խոսել՝ ինչ է պետք իրենց դպրոցում անվտանգ զգալու համար և խնդրի լուծման իրենց առաջարկները ներկայացնել երկրների առաջնորդներին: Դպրոցներում բռնությանը վերջ դնելու համար ՅՈՒՆԻՍԵՖ-ը կոչ է անում հրատապ գործողություններ իրականացնել հետևյալ ոլորտներում.

---

[2] ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից (2018թ., Նյու Յորք) դպրոցական բռնության վերաբերյալ զեկույցի ամփոփ տվյալները՝ Տես՝ https://cutt.ly/mlXzEkV 2

- ապահովել համապատասխան օրենսդրության առկայությունը և պահպանումը,
- ապահովել դպրոցներում բռնության կանխարգելման և խնդրի համապատասխան լուծման մեթոդների առկայությունը ,
- աջակցել բռնության մասին բարձրաձայնող աշակերտներին և դասասենյակներում ու համայնքներում փոխել բռնության մշակույթը ,
- դպրոցում անվտանգություն ապահովող հաջողված լուծումներին ուղղված ներդրումներն ավելի արդյունավետ ու թիրախավորված դարձնել,
- հավաքագրել դպրոցներում կատարվող բռնության մասին տվյալները ավելի արդյունավետ ու տեսակավորված կերպով:

ՅՈՒՆԻՍԵՖ-ը քաջալերում է ողջ աշխարհի երիտասարդներին բարձրաձայնել դպրոցներում և դրանց շուրջ կատարվող բռնության մասին բռնությանը վերջ դնելու նպատակով: Երևույթը, որը «բուլինգ» անունն ունի, Հայաստանում ևս տարածված, սակայն չուսումնասիրված խնդիր է: Վիճակագրություն այն մասին, թե դպրոցում տարեկան քանի երեխա է հասակակցի կողմից բռնության ենթարկվում, Հայաստանում չկա: Թեպետ խնդիրն առկա է, բայց այն հաճախ չի դիտարկվում որպես խնդիր, այլ համարվում է «բնականոն, նորմալ երևույթ», այդ պատճառով էլ բուլինգի տարածվածությունը չափող հետազոտությունները բացակայում են: Փոխարենը կան թվեր, թե քանի անչափահաս է բուլինգի ականատես եղել:Հայաստանում բուլինգի դրսևորման հիմքում ընկած է կարծրատիպային մտածելակերպը, իրենցից տարբերվողների նկատմամբ անհանդուրժողականութ-յունը, ընդհանրապես «կանոններից» շեղումը: Բուլինգի կանխարգելման, այդ ուղղությամբ ուսուցիչների վերապատրաստման ծրագրեր չեն իրականացվել: «Հայաստանի դպրոցներում հիմնականում ակադեմիական, գիտելիքահեն կրթություն է տրամադրվում, իսկ երեխաների աշխարհայացքի ձևավորման, միջանձնային հարաբերությունների կառուցման, հաղորդակցման հմտությունների ուղղությամբ հանրակրթական դպրոցներում աշխատանքներ չեն տարվում: Մինչ օրս բուլինգի նկատմամբ լայնածավալ, պետական մոտեցում երբևէ չի կիրառվել: Բուլինգի դեմ

ուղղված փոքրիկ, տեղային ծրագրեր իրականացվել են միայն տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից, այն էլ շատ փոքր ծավալով[3]:

Դպրոցը շատերի մոտ ընկալվում է որպես պաշտպանված միջավայր, սակայն, մյուս կողմից էլ պետք է հասկանալ, որ այդ միջավայրում հայտնվում են երեխաներ, որոնք ինքնահաստատման խնդիր ունեն, հետևաբար՝ վարքի տարբեր ձևեր կարող են դրսևորել»,- ասում է հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի տնօրեն Արաքսյա Սվաջյանը:

Ըստ Արաքսյա Սվաջյանի՝ դպրոցը պետք է ձգտի դառնալ անվտանգ միջավայր յուրաքանչյուր սովորողի համար՝ նվազագույնի հասցնելով բուլինգի դեպքերը: Մինչդեռ երբեմն ուսուցիչներն ուղղակի կամ անուղղակի կերպով դառնում են բուլինգի մասնակից կամ հրահրող: Ուսուցչի կողմից արված անզգույշ արտահայտությունը կարող է թիրախավորել մի աշակերտիի, իսկ իրենց գերակայությունը հաստատելու ձգտում դրսևորող մյուս երեխաների համար դա բուլինգի չբարձրաձայնված թույլտվություն է դառնում:

Մասնագետն ասում է,որ բուլինգից զերծ դպրոցական միջավայր ունենալու համար անհրաժեշտ է աշխատել և' ուսուցիչների, և' ծնողների հետ. ոչ մեկը նրանցից իրավունք չունի անտարբեր լինել այս երևույթի նկատմամբ:

«Շատ կարևոր է, որ ծնողներն իմանան, որ դպրոցում ուրիշներին հալածող երեխաների շրջանում շուրջ 60% -ով ավելանում է հետագայում քրեական հանցագործությունների դիմելու հավանականությունը, որովհետև բռնությունը սկսում է ընկալվել որպես միջանձնային մակարդակում հարցեր լուծելու միակ տարբերակ:

Եթե դպրոցում ծնողները կարող են աչք փակել նրա վրա, որ իրենց երեխան բռնարար է՝ համարելով, որ այդկերպ նա իր հարցերը ինքնուրույն լուծելու հմտություն է ձեռք բերում ողջ կյանքի համար, ապա հետագայում այդ վարքը

[3] ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղենիշները երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում. իրավական վերլուծություն, Երևան 2017 https://www.unicef.org/armenia/sites/unicef.org.armenia/files/201901/no%20hyph%20reportcomplaint%20mechanism_HRDO.pdf

բոլորովին այլ դրսևորումների կարող է բերել: Բուլինգի տարածմանը մեծապես նպաստում է նաև այ հանգամանքը, որ այս գործընթացում ներգրավում են ոչ միայն զոհն ու բռնարարը, այլև՝ լուռ հետևողների մի ստվար զանգված» - Արաքսյա Սվաջյան:

1.2. Բուլինգի ընկալումը դպրոցականների շրջանում

Միջազգային տարբեր զեկույցների, գիտական հոդվածների և փաստաթղթերի ուսումնասիրությունից, բուլինգի տարբեր սահմանումների և մոտեցումների համադրումից, առավել նպատակահարմար է բուլինգի հետևյալ սահմանումը, որը առավել ընդգրկուն և զգայուն է այս հետազոտության համար.

«Բուլինգը անցանկալի, հոգեբանական, ֆիզիկական կամ էմոցիոնալ սահմանների խախտմամբ ագրեսիվ վարքն է դպրոցահասակ երեխաների շրջանում, որը ներառում է ուժերի իրական կամ ընկալվող անհամաչափություն, կրկնվող է կամ ունի կրկնման պոտենցյալ»[4]:

Աշակերտները, բուլինգը նկարագրում են հետևյալ բառերով.

Ծաղր, վիրավորանք, նվաստացում, երեխաների իրավունքների խախտում, ճնշում գործադրել, սեփական կամքը պարտադրել, անհավասար վերաբերմունք, անտեսում, հայհոյանք, անհարմար դրության մեջ դնել, չշփվել, վատ փոխհարաբերություններ, և այլն:

Աշակերտները նշել են բուլինգի գրեթե բոլոր ասպեկտները, ֆիզիկականից, մինչ հոգեբանական և սեռական, հոգեբանական սահմանների գաղափարը, բուլինգի զանազան օրինակներ և դրսևորումներ, որոնք փաստաթղթերի վերլուծության ժամանակ արտասահմանյան հոդվածներում չէին հանդիպել (ինչպես վերևում նշվեց՝ «բոլորի» ներակայությամբ լինելը[5]:

---

[4] Małgorzata Wójcik and Maria Mondry "The Game of Bullying": Shared Beliefs and Behavioral Labels in Bullying Among Middle Schoolers, 2020 American Psychological Association, 2020, Vol. 24, No. 4, 276 –293 https://psycnet.apa.org/fulltext/2020-43455-001.html

[5] https://erit.am/documents/pdf/1e81b93bf2d9f3223649de4a82ccfaa7.pdf

Երևույթը, որը «բուլինգ» անունն ունի, Հայաստանում ևս տարածված, սակայն չուսումնասիրված խնդիր է:Վիճակագրություն այն մասին, թե դպրոցում տարեկան քանի երեխա է հասակակցի կողմից բռնության ենթարկվում, Հայաստանում չկա: Թեպետ խնդիրն առկա է, բայց այն հաճախ չի դիտարկվում որպես խնդիր, այլ համարվում է «բնականոն, նորմալ երևույթ», այդ պատճառով էլ բուլինգի տարածվածությունը չափող հետազոտությունները բացակայում են: Փոխարենը կան թվեր, թե քանի անչափահաս է բուլինգի ականատես եղել:Հայաստանում բուլինգի դրսևորման հիմքում ընկած է կարծրատիպային մտածելակերպը, իրենցից տարբերվողների նկատմամբ անհանդուրժողականությունը, ընդհանրապես «կանոններից» շեղումը:Բուլինգի կանխարգելման, այդ ուղղությամբ ուսուցիչների վերապատրաստման ծրագրեր չեն իրականացվել[6]:

«Հայաստանի դպրոցներում հիմնականում ակադեմիական, գիտելիքահեն կրթություն է տրամադրվում, իսկ երեխաների աշխարհայացքի ձևավորման, միջանձնային հարաբերությունների կառուցման, հաղորդակցման հմտությունների ուղղությամբ հանրակրթական դպրոցներում աշխատանքներ չեն տարվում:Մինչ օրս բուլինգի նկատմամբ լայնածավալ, պետական մոտեցում երբևէ չի կիրառվել:Բուլինգի դեմ ուղղված փոքրիկ, տեղային ծրագրեր իրականացվել են միայն տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից, այն էլ շատ փոքր ծավալով:

[6] Respecting others: Anti-bullying overview: Guidance Guidance document No: 050/2011 Date of issue: September 2011 https://gov.wales/sites/default/files/publications/2018-03/respecting-others-anti-bullyingoverview.pdf

ԳԼՈՒԽ 2. ԲՈՒԼԻՆԳԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

2.1.Բուլինգի տեսակների և դրսևորումների տարածվածությունը դպրոցում

Ցանկացած անձ կամ երեխա կարող է դառնալ բռնության զոհ կամ ավելի թեթև ձևի ահաբեկում: Բավական է պարզապես լինել ավելի թույլ դիրքում կամ անցնել ինչ -որ մեկի ճանապարհը: Բայց ամենից հաճախ երեխաները, ովքեր ինչ -որ կերպ տարբերվում են իրենց հասակակիցներից, ընդգրկվում են զոհերի կատեգորիայի մեջ `ֆիզիկական տվյալներ, ակադեմիական հաջողություններ, նյութական կարողություններ, նույնիսկ պարզապես բնավորություն: Ավելի մեծ երեխաների զոհ դառնալու համար նույնիսկ դա անհրաժեշտ չէ:

Դպրոցական ագրեսորների մոտ 50% -ը ներկայումս իրենք են խոշտանգվում: Նրանք խոչընդոտվում և բռնության են ենթարկվում սեփական ընտանիքներում: Տղաները, որոնց ծեծում է հայրը, տեսնում են, թե ինչպես է նա ծաղրում իրենց մորը, դպրոց գալով, նրանք ավելի թույլերին կհատուցեն[7]:

Ընտանեկան բռնությունը կարող է նաև ապագայի մասին հոգալու ձև ունենալ: Եթե մայրը կամ հայրը երեխային անձնագիր չեն տալիս գնահատականների պատճառով, բղավում են նրան և վիրավորում նրան վատ արդյունքների համար, նրան զրկում են զբոսանքներից և քաղցրավենիքից, ստեղծում են խստացված դասացուցակ ` հանգստի համար ժամանակ չթողնելով, երեխան իրեն կպահի նույն կերպ դպրոցում: Բայց նրա ագրեսիան ավելի շատ ուղղված է մրցակիցներին: Այնուամենայնիվ, նման երեխաները պարզապես արհամարհում են թույլ ուսանողներին[8]:

Զոհի և ագրեսորի լավ օրինակ կարելի է տեսնել Potterian- ում: Գլխավոր հերոս Հարի Փոթերը և մեկ այլ ուսանող Դրակո Մալֆոյը վիճում են միմյանց հանդիպելու

---

[7] Weaver L.M A Content Analysis of Protective Factors Within States' Antibullying Laws, Journal of School Violence 12(2):156-173 https://www.researchgate.net/publication/263581347_A_Content_Analysis_of_Protective_Factors_Within_States'_Antibullying_Laws

[8] Olweus, D. Bullying at school: What we know and what we can do. Malden, MA: Blackwell Publishing (1993) https://www.researchgate.net/publication/246876123_Olweus_D_1993Bullying_at_school_What_weknow_and_what_we_can_do_Malden_MA_Blackwell_Publishing_140_pp_2500

օրվանից: Նրանք հաճախ հավասար հակառակորդներ են, բայց երբեմն Հարրին վերածվում է դասական զոհի: Միակ տարբերությունն այն է, որ բուլլերները հաճախ իրենց հարձակումների համար ընտրում են արտաքուստ ոչ համակրելի երեխաներին:

Այսպիսով, Հարրի Փոթերը հանգիստ, ոչ ագրեսիվ տղա է: Ահաբեկչության զոհերն իրենց խաղաղությունն ու բարեսիրտ վերաբերմունքը փոխանցել են շրջակա տարածք: Ագրեսորը այս որակը ընկալում է որպես թուլություն և հարձակումներ:

Հարրին ցույց է տալիս վառ զգացմունքային արձագանք: Ծնողների հիշատակումից նա կորցնում է ինքնատիրապետումը: Տուժողը նաև ունի որոշակի արտահայտված թուլություն, որը կարող է ճնշվել ՝ արցունքներով հիանալու կամ անվերահսկելի զայրույթի պոռթկումով, ցույց տալու իրենց գերազանցությունը կամ ուրիշներին զվարճացնելու համար: Երեխային, ով ամեն ինչ լուռ ու անաղմուկ տանում է, առանց տառապանք ցույց տալու, թունավորելը շատ հետաքրքիր չէ: Ինչ - որ մեկի հետ, ում դա չի հետաքրքրում, ընդհանրապես անելիք չկա:

Բռնաճնշման գործընթացն ինքնին տեղի է ունենում միայն այն դեպքում, երբ հետևյալ գործոնները համընկնում են.

- **Անպաշտպանություն**… Կարևոր է, որ ոչ ոք չպաշտպանի զոհին, հակառակ դեպքում ահաբեկումը շատ արագ կդադարի: Եթե երեխաները զուգարանում ծեծի են ենթարկվում ավելի մեծ տղաների կողմից, և ոչ ոք չի արձագանքում, ահաբեկումը կշարունակվի:Ֆիզիկապես թույլ տղաները նույնպես ավելի շատ են ենթարկվում ուժեղ հասակակիցների: Բայց ծնողների և ուսուցիչների կոշտ արձագանքով, բռնության դեպքերը այլևս չեն կրկնվի: Հետևաբար, ցուլերը գործում են իմաստուն. Նրանք կամ ընտրում են անպաշտպան զոհ, կամ հետևողականորեն ոչնչացնում են ուրիշների համակրանքը նրա նկատմամբ: Այսպիսով, Potterian Draco- ում Հարրիի մասին լուրեր տարածվեցին, որ նա մարդասպանի ժառանգն է և սպանում է բոլորին դպրոցում: Այսպիսով, զոհը կորցրեց մյուս ուսանողների համակրանքը և դարձավ հարմար թիրախ:

- **Մինչև մահ պայքարելու ցանկություն**… Բուլլերները վախկոտ են: Այդ պատճառով նրանք ընտրում են հարձակվել ավելի թույլերի վրա, նրանց վրա, ովքեր երաշխավորված են, որ չեն կարողանա պատասխանել: Տուժողը չի դիմադրում ագրեսորին մի քանի պատճառներով ՝ ուժերի հստակ գերակշռություն, ի պատասխան ՝ էլ ավելի ագրեսիա ստանալու վախ, կամ այն պատճառով, որ չի ցանկանում «վատ» լինել: Որոշ երեխաներ չեն պաշտպանում իրենց ՝ ծնողների ՝ «կռվելը վատ է» վերաբերմունքի պատճառով: Եթե նրանց համոզեն և ապացուցեն, որ հնարավոր է և անհրաժեշտ է պաշտպանվել, իրավիճակը դառնում է ավելի քիչ ողբերգական:
- **Ցածր ինքնագնահատական**… Ինքնաբավարարվածությունը կամ մեղավորությունը հաստատապես գտնվում են զոհի գլխում: Սա հատկապես արտահայտված է այն երեխաների դեպքում, ովքեր իսկապես ունեն զարգացման որոշակի առանձնահատկություններ ՝ հիպերակտիվություն, ուշադրության պակասի խանգարում, կակազություն: Ռիսկի գոտում և երեխաներին, որոնց ընտանիքը չի աջակցում, որտեղ չկա վստահելի հարաբերություն հարազատների հետ, երեխան մեծ մասամբ թողնում է իրեն և փողոցին:
- **Բարձր ագրեսիվություն**… Երբեմն զոհերը երեխաներ են, ովքեր հանդուգն են, զգացմունքային և ցավագին արձագանքում են ցանկացած դիտողության կամ խնդրանքի: Այստեղ ագրեսիվությունը ռեակտիվ բնույթ ունի և բխում է բարձր գրգռվածությունից և անպաշտպանությունից:
- **Հոգեբանական և սոցիալական խնդիրներ**… Մենակություն, սոցիալական նեղություն, դեպրեսիա, հասակակիցների հետ շփվելու անկարողություն, թերարժեքության բարդույթ, աշխարհի բացասական պատկերի խորը համոզմունք, սեփական ընտանիքում բռնություն, բռնության պասիվ հպատակություն. Սրանք երեխայի զոհ դառնալու նախադրյալներն են: դպրոցում. Վախկոտությունը, անհանգստությունը, զգայունությունն ու

կասկածամտությունը, որպես անհատական բնավորության գծեր, երեխային դարձնում են անպաշտպան, գրավում ագրեսորին:

Աշակերտները բուլինգի մասին խոսելիս, առաջինը սկսում են պատմել ուսուցիչների կողմից աշակերտների հանդեպ բուլինգի դրսևորումների մասին: Աշակերտների նկարագրություններից, կարող ենք մի քանի կարևոր բացահայտում առանձնացնել ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների վերաբերյալ[9].

Աշակերտների ընկալմամբ,

- Ուսուցիչների մեծամասնությունը ունի մանկավարժական և հոգեբանական հմտությունների պակաս:
- Ուսուցիչները հաճախ իրենց անձնային, հոգեբանական, ընտանեկան և աշխատանքային խնդիրները պռոյեկտում են աշակերտների վրա: Ըստ նրանց պատճառն այն է, որ ուսուցիչը կարող է վատ տրամադրությամբ մտնել դասարան և «բարկությունը թափել» որևէ պատահական աշակերտի վրա, առանց տեսանելի/հասկանալի պատճառի:
- Ուսուցիչների կողմից ագրեսիվ վերաբերմունքը, բղավելը, կոպտելը կարող է լինել ինչպես մեկանգամյա երևույթ ամբողջ դասարանի նկատմամբ, այնպես էլ տևական լարված փոխհարաբերությունների ձևաչափով 1 կամ մի խումբ աշակերտների կամ ամբողջ դասարանի հետ:
- Աշակերտների խոսքով ուսուցիչները հաճախ զգայուն և նրբանկատ չեն, և կարող են աշակերտին դնել անհարմար իրավիճակի մեջ, ամբողջ դասարանի ներկայությամբ որևէ անձնական կամ զգայուն թեմայով դիտողություն անելով, ֆիզիկական կամ խոսքային բռնություն գործադրելով և այլն:
- Աշակերտների զգացողությամբ, ուսուցիչները խտրական վերաբերմունք ունեն աշակերտների հանդեպ: Որքան աշակերտի առաջադիմությունը, ուսումնական կարողությունները, սոցիալական կարգավիճակը և ընտանիքի ֆինանսական դրությունը ավելի բարձր է և բարենպաստ, այնքան ավելի դրական և հարգալից է աշակերտի հանդեպ վերաբերմունքը:

[9] file:///C:/Users/Win%207/Downloads/1e81b93bf2d9f3223649de4a82ccfaa7.pdf

- Դասարանը աշակերտի կյանքում կարևոր առաջնային խումբ է, և աշակերտները չեն ցանկանում որ դասընկերները տեսնեն թե ինչպես են իրենց վիրավորում կամ ծաղրում:
- Աշակերտների խոսքով, հաճախ դասարանի մյուս աշակերտները տեսնելով որ ուսուցիչը որևէ աշակերտի ծաղրում է կամ անհարգալց է վերաբերում, դառնում են բուլինգի պասիվ մասնակիցներ, սկսում են խուսափել այդ աշակերտից, կամ ծաղրել, կամ էլ ցույց տալ, որ այդ աշակերտը կորցրել է իր դիրքը դասարանի ոչ ֆորմալ կառուցվածքում:
- Առանձին ուշադրության է արժանի «ուսուցչի մոտ լրացուցիչ պարապելու» պրակտիկան, որը ևս դառնում է ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների վատացման պատճառ: Ուսուցիչը ընդգծված դրական վերաբերմունք է ցույց տալիս այն աշակերտների հանդեպ, ովքեր իր մոտ լրացուցիչ պարապում են: Եվ հակառակը, հիմնականում լատենտ-մանիպուլյատիվ բացասական վերաբերմունք այն աշակերտների հանդեպ, ովքեր կամ չեն պարապում, կամ պարապում են ուրիշ ուսուցչի մոտ:

2.2.Բուլինգի հետևանքները աշակերտների վրա

Բուլինգի մեջ ակտիվորեն ներգրավված են երեխաների երեք խմբեր `զոհը, ագրեսորը և դիտորդները: Բռնությունը սկսվում է մեկ անձի կողմից, սովորաբար նա դասարանում առաջատար է, ուսման մեջ հաջողակ, կամ, ընդհակառակը, ագրեսիվ անգրագետ: Դիտորդները, որպես կանոն, չեն զգում ահաբեկման հաճույքը, այլ ստիպված են լինում կամ միանալ, կամ լռել ` վախենալով, որ իրենք իրենք զոհը կլինեն: Նրանցից առավել համարձակները կանգնում են զոհի կողքին: Սակայն վերջիններիս պասիվ ոչ դիմադրողականությունը և մեծահասակների կողմից ահաբեկման լուռ աջակցությունը նրանց ստիպում է նահանջել: Տուժողը հայտնվում է միայնակ իր տանջողների կամ տանջողի հետ:

Ինչպես ցանկացած արտաքին ազդեցություն, կրած տրավման, անշուշտ, կազդի հետագա կյանքի վրա: Ավելին, չպետք է մտածել, որ ագրեսորի համար նրա պահվածքը կմնա անպատիժ:

Դպրոցում բռնության ենթարկվածի հետևանքները

Լինելով բռնության զոհ, երեխան ստանում է հսկայական հոգեկան վնասվածք, որն անխուսափելիորեն ազդում է նրա հետագա կյանքի վրա[10].

- **Հոգեկան խանգարումներ**… Բուլինգի նույնիսկ մեկ դեպքը թողնում է խորը հուզական սպի, որը պահանջում է հոգեբանի մասնագիտացված աշխատանք: Երեխան դառնում է ագրեսիվ և անհանգիստ, ինչը նույնպես անցնում է չափահասության: Նա դժվարություններ ունի վարքի մեջ: Նրանք մյուսներից ավելի հավանական է, որ ընկճվեն և ինքնասպան լինեն :
- **Հարաբերությունների դժվարություններ**… Մանկության տարիներին բուլիինգի ենթարկված մարդկանց աշխատավայրում մոբինգի զոհ դառնալու հավանականությունը բազմիցս աճում է: Համաշխարհային վիճակագրությունը պնդում է, որ մեծահասակները, ովքեր մանկության տարիներին ենթարկվել են բռնության, մեծ մասամբ մնում են միայնակ կյանքի համար, նրանց համար ավելի դժվար է բարձրանալ կարիերայի սանդուղք: Հետևաբար, նրանք ավելի հավանական են, քան մյուսները, ընտրելու տնային կամ առանձին աշխատանք: Նրանք ավելի շատ են շփվում սոցիալական ցանցերում, քան իրական աշխարհում:
- **Հիվանդություններ**… Ֆիզիկական հիվանդությունները շատ հաճախ ահաբեկման սերտ արդյունք են: Կան դեպքեր, երբ սթրեսից ու անզորությունից տղաները սկսեցին սրտի լուրջ խնդիրներ ունենալ: Դեռահաս աղջիկները հակված են մեկ այլ դժբախտության. Ծաղրանքը և վիրավորանքները նրանց տանում են դեպի անորեքսիա կամ բուլիմիա: Հնարավոր են քնի խանգարումներ և վնասվածքների զարգացում հոգեսոմատիկայի մեջ: Օրինակ,

[10] «Երեխաների կարծիքով» հարցման արդյունքներ, Երևան 2017 https://resourcecentre.savethechildren.net/node/12512/pdf/yv_brief_version_final_arm.pdf

դեռահասը տառապում է երիկամների ցավից, սակայն թեստերն ու թեստերը ոչինչ չեն ցույց տալիս: Ցավի սինդրոմը անհետանում է միայն հոգեբանի աշխատանքից հետո:

Երեխաների նկատմամբ ֆիզիկական բռնության կիրառումը նույնքան քրեականացված է, որքան մեծահասակների նկատմամբ: Կապտուկներն ու քերծվածքները կարող են գրանցվել հիվանդանոցում, որտեղ դրանց ծագումը գրանցվում է ըստ երեխայի խոսքերի: Հիվանդանոցը պարտավոր է տեղեկությունը փոխանցել ոստիկանությանը, իսկ ոստիկանությունը՝ արձագանքել: Բյուլերի ծնողները կանչվում են զրույցի, և դպրոցը ստիպված կլինի բացատրել, թե ինչպես են նրանք թույլ տվել այս իրավիճակը:

Բլուլերի հետևանքները դպրոցում

Հազվագյուտ դեպքերում մեծահասակ ցուլերը գիտակցում են իրենց անհրապույր վարքագիծը: Անցյալ «շահագործումների» մասին հիշողությունները նրանց մոտ առաջացնում են այրվող ամոթի զգացում: Երբեմն նրանք նույնիսկ փորձում են ինչ -որ կերպ փոխհատուցել: Բայց դպրոցական բռնության զոհերը հազվադեպ են կապ հաստատում իրենց խոշտանգողների հետ[11]:

Ինչպես մի զոհ գրել է համակուրսեցիներին ուղղված բաց նամակում. «Նույնիսկ ձեր անուններն են ինձ հիվանդացնում, և հանդիպման մասին խոսք լինել չի կարող»: Հատկապես այս առումով, գործնական գործընկերներ Julուլիա Ռոբերթսը և Անջելինա olոլին բախտ չունեցան: Երկուսն էլ մանկության մեջ այնքան էլ գրավիչ չէին, նրանք մեծապես տուժում էին դասընկերների ծաղրից: Այժմ բոլորը գիտեն վերջիններիս դաժանության և հիմարության մասին, նույնիսկ իրենց երեխաների:

Ագրեսորը ավելի քիչ է տուժում ահաբեկման հետևանքներից, քան զոհը, բայց այնուամենայնիվ այն չի անցնում առանց հետքի նրա համար.

1. **Անբարենպաստ ապագա**… Մեծահասակների աշխարհում պարզունակ հակասոցիալական վարքագիծը դադարում է գործել, իսկ ցուլերը հայտնվում

[11] «Երեխաների կարծիքով» հարցման արդյունքներ, Երևան 2017 https://resourcecentre.savethechildren.net/node/12512/pdf/yv_brief_version_final_arm.pdf

են կյանքի աղբարկղում: Մինչ նրանց զոհերը՝ ներս ու ներս, ավարտում են համալսարանները, ստանում լավ աշխատանք և ապահով կյանք, նրանց տանջողների ճանապարհը ավարտվում է բանտախցում: Լավագույն դեպքում նրանք բուսականությամբ զբաղվում են ցածր որակավորում ունեցող, ցածր վարձատրվող աշխատանքներով և նախանձով են նայում իրենց նախկին դպրոցականներին:

2. **Հարաբերությունների խնդիրներ**… Երեխաները, որոնց հաջողվում է համատեղել ահաբեկումը բարձր սոցիալական կարգավիճակի հետ, դառնում են բռնապետ ընտանիքում և խստագույն պատիժ աշխատավայրում: Սրանք բամբասանքներ ու սուտասաններ են: Նրանք ցանցեր են հյուսում ավելի հաջողակ գործընկերների համար, նստում, բարձրանում վերև և գնում դեպի իրենց նպատակը «դիակների վրայով»: Նրանցից շատերը կարիերայում հասնում են բարձր արդյունքների: Հետևաբար, նրանք վաղ թե ուշ մահկանացու թշնամիներ են ստեղծում, իսկ մնացածները նրանց չեն սիրում ու վախենում:
3. **Սարսափ ընտանիքում**… Նույնիսկ եթե արդեն հասուն տարիքում նրանք հաջողակ են, ապա շրջապատը նրանց անհարմար է զգում: Ուրիշների դժբախտությունների հետ զվարճանալը մնում է նրանց կյանքի հոբբին: Նրանք չգիտեն, թե ինչպես ջերմ հարաբերություններ հաստատել երեխաների հետ, սիրելիների հետ, հաճախ պարզապես պատճենելով իրենց ծնողների վարքագիծը:

Այսպիսով, մենք հանգեցինք այն եզրակացությանը, որ «Բռնությունն անմոռանալի դաս է, դաս, որ ոչ մի երեխա չպետք է սովորի»[12]:

---

[12] ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից (2018թ., Նյու Յորք) դպրոցական բռնության վերաբերյալ զեկույցի ամփոփ տվյալները՝ Տես՝ https://cutt.ly/mlXzEkV 2

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով սույն ավարտական աշխատանքը, հետազոտության և վերլուծության արդյունքների հիման վրա կարելի է անել հետևյալ եզրակացությունները, որոնք արտահայտում են ուսումնասիրության առանցքային դրույթներն ու հիմնական եզրակացությունները:

Այսպիսով, կատարված հետազոտությունը թույլ տվեց բացահայտել, որ Հայաստանում գոյություն ունի բուլինգի բավականին լուրջ խնդիր, սակայն դրա մասին ընդունված չէ խոսել, այնպես, ինչպես ընտանեկան կամ սեռական բռնության կամ այլ խնդիրների մասին: Սակայն հայաստանյան իրականությունը հատուկ լուծումների կարիք ունի: Հասարակությունը կարծես քողարկում է բուլինգի դեպքերը:

Բուլինգի խնդիրն ըստ էության բարձրաձայնվելու փոխարեն թաքցվում է և ներկայացվում որպես հայ հասարակությանը ոչ բնորոշ մի երևույթ: Այսպիսով, դպրոցական բուլինգի հիմնական պատճառը ծաղրողի հոգեկան խնդիրներն են: Ծաղրողը հաճախ կամքով թույլ մարդ է և իրեն բարձր է զգում միայն այն ժամանակ, երբ ծաղրում է մնացածին, երբ իր աշխարհում նա դառնում է բարձրագույնը: Հետևաբար այսպիսի մարդկանցից ոչ թե պետք է հեռու մնալ կամ, ինչպես անում են որոշ ուսուցիչներ, թևերը թափ տալ և ասել, որ այդ երեխան չի ուղղվի, այլ փորձել հասկանալ նրան, հասկանալ, թե ինչու է նրա մեջ այդ ցանկությունն առաջանում, և գոնե ջանալ այդ երեխային ճիշտ ուղու վրա դնել: Մեր հասարակությունը ձգտում է խնդիրները ստվերում պահել այն պատճառաբանությամբ, որ եթե խնդիրը փակի տակ է, դադարում է տարածվել և գոյություն ունենալ:Սակայն պետք է հաշվի առնել մի կարևոր փաստ, որ երեխայի կյանքում եղած ցանկացած երևույթ, լինի դրական թե բացասական, մեծ ազդեցություն է թողնում նրա հետագա կյանքի որակի վրա:

Եթե կան խնդիրներ, կգտնվեն դրանց լուծումները, պարզապես պետք է տեսնել, հասկանալ խնդիրը և լուծումներ գտնել: Բուլինգի խնդրի լուծումն ու կանխարգելումը պետք է գտնել երեխա-ծնող- ուսուցիչ ակտիվ

համագործակցության շնորհիվ: Դպրոցում դասղեկի ժամերին պարբերաբար անդրադառնալ խնդրին, քննարկել երևույթը, խոսել դրա վատ ազդեցությունների մասին: Կարելի է աշակերտներին ներկայացնել իրենց իրավունքները, միասին կարդալ այն օրենքները, որոնցով պաշտպանվում են այդ իրավունքները: Կարելի է մշտապես կապ պահել դպրոցի հոգեբանի հետ, հանդիպել և քննարկել երեխայի պահվածքը: Շատ կարևոր է, որ ծնողներն ուշադրություն դարձնեն իրենց երեխաների ամենօրյա վարքին, այնպիսի մանրուքների, ինչպիսիք են, օրինակ՝ դպրոց գնալու ցանկության բացակայությունը, նույն մարդուց շարունակական բողոքը, անտրամադիր կամ ընկճված լինելը: Եթե նման նախանշաններ կան, ապա մեծահասակները նախ պետք է երեխայի ներքին տագնապայնությունը նվազեցնեն շարունակական աշխատանքի միջոցով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից (2018թ., Նյու Յորք) դպրոցական բռնության վերաբերյալ զեկույցի ամփոփ տվյալները՝ Տես՝ https://cutt.ly/mlXzEkV 2
2. «Երեխաների կարծիքով» հարցման արդյունքներ, Երևան 2017 https://resourcecentre.savethechildren.net/node/12512/pdf/yv_brief_version_final_arm.pdf
3. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղենիշները երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում. իրավական վերլուծություն, Երևան 2017 https://www.unicef.org/armenia/sites/unicef.org.armenia/files/2019-01/no%20hyph%20reportcomplaint%20mechanism_HRDO.pdf
4. Małgorzata Wójcik and Maria Mondry "The Game of Bullying": Shared Beliefs and Behavioral Labels in Bullying Among Middle Schoolers, 2020 American Psychological Association, 2020, Vol. 24, No. 4, 276 –293 https://psycnet.apa.org/fulltext/2020-43455-001.html
5. Respecting others: Anti-bullying overview: Guidance Guidance document No: 050/2011 Date of issue: September 2011 https://gov.wales/sites/default/files/publications/2018-03/respecting-others-anti-bullyingoverview.pdf
6. Olweus, D. Bullying at school: What we know and what we can do. Malden, MA: Blackwell Publishing (1993)
7. https://www.researchgate.net/publication/246876123_Olweus_D_1993Bullying_at_school_What_weknow_and_what_we_can_do_Malden_MA_Blackwell_Publishing_140_pp_2500
8. Weaver L.M A Content Analysis of Protective Factors Within States' Antibullying Laws, Journal of School Violence 12(2):156-173 https://www.researchgate.net/publication/263581347_A_Content_Analysis_of_Protective_Factors_W ithin_States'_Antibullying_Laws
9. file:///C:/Users/Win%207/Downloads/1e81b93bf2d9f3223649de4a82ccfaa7.pdf